ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<07>> ----------08----------2025թ. N ՄՈ/773 -Ա

ք. Արմավիր

«ԲԱԳԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԵՂԵՑԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գեղեցիկ Ավետիսյանի 2025 թվականի օգոստոսի 4-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գեղեցիկ Ավետիսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2025 թվականի օգոստոսի 11-ից սեպտեմբերի 4-ը ներառյալ՝ 19 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գեղեցիկ Ավետիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Արմինե Ավոյանին:
3. «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Արմինե Ավոյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի օգոստոսի 11-ից սեպտեմբերի 4-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գեղեցիկ Ավետիսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի սեպտեմբերի 5-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

X

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 **ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**